ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք,
ՀՀ, Արարատի մարզ, գ. Աբովյան, Հեռ. (098)550001 ,
abovyan.ararat@mta.gov.am

N 178
07 դեկտեմբեր 2016թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ Ռ. Աբրահամյան

Կից ներկայացնում ենք թիվ 52-Ա, թիվ 53-Ա, թիվ 54-Ն, թիվ 55-Ա, թիվ 56-Ա, թիվ 57-Ա, թիվ 58-Ն, թիվ 59-Ա ավագանու որոշումները:

Առդիր 16 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 52-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Աբովյան համայնքի ավագանու հերթական թիվ 16-րդ նիստի օրակարգը՝

1. 2016թ-ի գույքագրման հանձնաժողովի ցուցակի հաստատման մասին
2. 2017թ-ի <<Տեղական Տուրքերի և Վճարների>> մասին համայնքի ղեկավարի կողմից ավագանու նիստի հաստատմանը ներկայացվող դրույքաչափերի հաստատման մասին
3. Աբովյան համայնքի 2017թ-ի բյուջեի եկամտային մասում գույքահարկի գումարը պակասեցնելու մասին
4. Աբովյան համայնքի 2017թ-ի հողի հարկի գումարը պակասեցնելու մասին
5. Աբովյան համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում փոփոխություն կատարելու մասին
6. Աբովյան համայնքի ղեկավարի աշխատավարձիի, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափեր հաստատելու մասին
7. 2017թ-ի Աբովյան համայնքի բյուջեի հաստատման մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 53-Ա

2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջները.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել 2016 թվականի գույքագրող հանձնաժողովի կողմից ներկայացված համայնքի սեփականություն հանդիսացող՝ գյուղապետարանի գույքի, մշակույթի տան գույքի և գրադարանի գույքի ամենամյա գույքագրման ցանկը՝ համաձայն հավելվածի.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 54-Ն

2017ԹՎԱԿԱՆԻ <<ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով և <<Տեղական Տուրքերի և Վճարների Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնքում

2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ

2) Սույն կետի <<1>> ենթակետում չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ

բ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ

գ)1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ

դ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման,արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ

2) Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1 ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում՝ է 2000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում ՝ 8000 դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետը ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական ևոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու համար ՝ 6000 դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ

ե) 201 մետրից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 250 դրամ մեկ քառակուսի մետրի համար

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկակկն հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ

3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ

4) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ

5) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 5000 դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 7000 դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 10000 դրամ

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ

զ) 501 և ավելի քառակուսի ընդահնուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա) Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանարյին սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները / սաունաները /, խաղատները ժամը 24.00-ից աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ

3) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ

4) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

5) համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 տոկոսի չափով՝ 250 դրամ

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահամանված տուրքի 10 տոկոսը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝ 100 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարավա համար սահմանվում է՝ 1000 դրամ:

9. Հայաստանի Հանարապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմավում է՝ 5000 դրամ:

11. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 250000:

12. Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0,5 գործակցով:

Տեղական վճարներ

1. Համայքնի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխահատուցման վճարներ սահմանվում է՝ 10000 դրամ:

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 5000 դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 1000 դրամ:

4. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝

1) յուրաքանչյուր բնակչի համար՝ 0 դրամ

2) սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար՝ 250 դրամ:

Ուժը կորցրած ճանաչել 23.12.2015 թվականի ավագանու N 51-Ն որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՐԳ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ • 04201558 • ՊՈՍՏԱՏՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 55-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Կան ավտոմեքենաներ որոնք հաշվառված են Աբովյան համայնքի վարչական տարածքում, ինչպես նաև ,,Միչյան ,, համայնքների միության գույքահարկի շտեմարանում, սակայն նրանց ճակատագիրը անհայտ է: Քաղաքացիները հրաժարվում են վճարել գույքահարկ, քանի որ այդ ավտոմեքենաները առք ու վաճառքի պայմանագրերով վաճառվել են այլ քաղաքացիների: 58.7 հազար դրամը՝ որպես չհավաքագրվող գումար , խանգարում է բյուջեյի ճիշտ պլանավորմանը և անհնարին է դարձնում հաշվարկային թվին:
Հետևաբար ավագանին որոշեց, որպես չհավաքագրվող գումար 2017 թվականի բյուջեյի եկամտային մասում ավտոհարկի գումարը պակասեցնել 58.7 հազ.դրամով և հաստատել ավտոմեքենաների սեփականատերերի ցուցակը համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 56-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և << Հողի Հարկի Մասին>> օրենքի 10-րդ հոդվածով.

համայնքի ավագանին որոշում է՝

Աբովյան համայնքի 2017թվականի բյուջեյի եկամտային մասում հողի հարկի գումարը պակասեցնել 374.9 հազար դրամով և հաստատել 2012-2016թթ-ին Աբովյան համայնքում նորատունկ այգիներ հիմնած և հողի հարկից ազատված սեփականատերերի ցուցակը՝ համաձայն հավելվածի.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 04201558

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 57-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՅԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.01.02.51 գործառնական դասակարգման 4891 հոդվածից 140.0 հազ դրամը պակասեցնել և ուղղությունը տալ մշակույթային միջոցառումների իրականացման 08.02.04.51 գործառնական դասակարգման 4269 հոդվածին՝ ամանորյան նվերների գումար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 58-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել 2017 թ-ի Աբովյան համայնքի ղեկավարի աշխատավարձը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 59-Ա

2017 ԹՎԱԿԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արարատի մարզի Աբովյան համայնքի 2017թ-ի բյուջեն.

Վարչական բյուջեյի եկամտային մաս- 30056.800 հազ. դրամ

1. Հարկեր և տուրքեր --- 5617.4 հազ. դրամ

1.1 հողի հարկ --- 2153.1հազ. դրամ
1.2 Գույքահարկ շենքի և շինությունների ---118.0հազ. դրամ ,
այդ թվում՝ ֆիզ. անձանցից --- 118.0հազ. դրամ
1.3 Գույքահարկ փոխադրամիջոցներից --- 2934.3հազ. դրամ
1.4 Տեղական տուրք --- 112.0հազ. դրամ ,
այդ թվում՝ ծխախոտի վաճ. թույլտվություն --- 56.0 հազ. դրամ
խմիչքների իրացման համար --- 56.0 հազ. դրամ
2.Հողերի վարձակալությունից մուտքեր --- 300.0 հաղ. դրամ
3. Ընթացիկ ներքին դրամաշնորներ ---24439.4 հազ.դրամ,
այդ թվում՝ դոտացիա՝ --- 24439.4 հազ. դրամ

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻ ՄԱՍ ------- 30056.800 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

1.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ --- 17745.0 ՀԱԶ. ԴՐԱՄ
4111--- 13900.0 հազ. դրամ --- աշխատավարձ
4212 --- 1000.0 հազ. դրամ --- Գյուղապետարանի ջեռուցման, էլեկտրոէներգիային համայնքի կենտրոնական ճանապարի լուսավորության, գազի ծախսեր
4213--- 200.0 հազ. դրամ --- կոմունալ ծառայությունների ծախսեր այդ թվում՝
այդ թվում՝ ա/ 160.0 հազ. դրամ խմելու ջրի ծախսեր
բ/ 40.0 հազ. դրամ դեռատիզացիայի ծախսեր
4214 ---330.0 հազ.դրամ --- հեռախոսակապի, ինտեռնետ և դոմենի ծառայությունների ծախսեր
4215 --- 40.0 հազ դրամ ---ավտոմեքենայի ապահովագրական ծախսեր

4231--- 215.0 հազ.դրամ ---վարչական ծառայությունների ծախսեր՝ գույքահարկի և հողի հարկի

հաշվառման ծառայությունների գումար

4232--- 100.0 հազ.դրամ --- համակարգչային ծառայություն

4233---30.0 հազ. դրամ --- աշխատանքների մասնագիտական զարգացման ծառայություն

4234 --- 150.0 հազ. դրամ ---տեղեկատվական ծառայությունների ծախսեր (թերթերի գումար) ,

թերթում հայտարարության տպագրման գումար

4235--- 100.0 հազ. դրամ --- Աուդիտորական ծառայություն

4241---120.0 հազ. դրամ --- Մասնագիտական ծառայություն

4252 --- 150.0 հազ. դրամ ---մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում

4261 --- 250.0 հազ. դրամ --- գրասենյակային նյութեր

Այդ թվում՝ (թուղթ, մատիտ, գրիչ, հաշվիչ, ձևաթուղթ, կարիչ, դակիչ, կնոպկա, գրչման, սեղանի և պատի օրացույցներ, ռեգիստր, գրասենյակային գրքեր, քաթրիչ ֆլեշկա և այլն)

4264 --- 900.0 հազ. դրամ --- տրանսպորտային նյութեր

այդ թվում՝ ա/ 600.0 հազ. դրամ բենզին

բ/ 300.0 հազ. դրամ ավտոպահեստամասեր

4267--- 100.0 հազ. դրամ --- մաքրիչ նյութերի ծախսեր

(ավել, օճառ, պատուհան լվանալու հեղուկ, մաստիկա և այլն)

4269 --- 150.0 հազ. դրամ --- հատուկ նպատակային նյութեր, այդ թվում՝

(դռան փական, էլ. հաղորդալար ,,խաչուկ,, ժամ, լույսեր, աթոռներ, պահարաններ, շերտավարագույրներ, և կառնիզներ)

4823---10.0 հազ. դրամ---տեխ. զննում

2. ՎԱՐՉԱԿԱՆ ՕԲԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ 400.0 հազ. դրամ

4251--- 400.0 հազ. դրամ (վարչական շենքի նորոգում)

3.ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 3300.0 հազ. դրամ

4729 --- 2500.0 հազ. դրամ --- ֆինանսական աջակցություն սոցիալապես անապահով

ընտանիքներին, նորածին երեխաների ընտանիքներին

4726--- 650.0 հազ. դրամ --- թաղման գումար մահացած անձանց ընտանիքներին

4239--- 150.0 հազ.դրամ ---հուղարկավորության համար ծաղկեպսակի տրամադրման

ծառայությունների գումար

4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ --- 250.0 հազ. դրամ

4261 --- 250.0 հազ. դրամ --- սեպտեմբերի 1-ի կապակցությամբ աշակերտների նվերների գումար

5. ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐ. ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾ. ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ --- 200.0 հազ. դրամ

4269 --- 200.0 հազ. դրամ --- հատուկ նպատակային նյութեր՝ կենտրոնական փողոցի լուսավորության վերանորոգման համար ,այդ թվում՝ մալուխ /հաղորդալար/ լամպ և այլն

6. ԱՂԲԱՀԱՆՈՒՄ --- 996.0 հազ. դրամ

4213 --- 996.0 հազ. դրամ ---աղբահանման ծառայության գումար

7. ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ --- 1300.0 հազ. դրամ

4239 --- 850.0 հազ. դրամ --- մշակույթային միջոցառումների հետ կապված ծառայության մատուցման գումար

4269 --- 450.0 հազ. դրամ --- Մարտի 8-ի, հունիսի 1-ի՝ երեխաների պաշտպանության օրվա և ամանորյա նվերների գումար

8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅ.-ԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ --- 170.0 հազ. դրամ

4819 --- 170.0 հազ. դրամ --- ֆինանսական աջակցություն ,,Արարատ-2001'' հիմնադրանին, մարզ. խորհուրդ, ,,ՀՀ ազատամ. Վետերան. Միություն,, , ,,Անմահ պուրակներ,, հուշահ. և այլն

9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ --- 150.0 հազ. դրամ

4241--- 150.0 հազ. դրամ--- հողերի չափագրում

10. ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ --- 30.0 հազ. դրամ

4239 --- 30.0 հազ. դրամ --- թատերական ներկայացումների ծառայությունների գումար

11. ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՊՈԱԿԻՆ 925.0 հազ. դրամ

4637 --- 925.0 հազ. դրամ --- նախակրթարանի մեկ խմբի դաստիարակին աշխատավարձի վարձատրության գումար

12՝ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄ՝ 400.0 հազ դրամ

4241--- հողերի չափագրման գումար--- 200.0 հազ. դրամ

4823--- վկայականների ծառայության և պետական տուրքի գումար--- 200.0 հազ. դրամ

13. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ --- 4190.8 հազ. դրամ

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ

4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ

6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ